

Ները Համազասպներու հետ ընդունեցանք իբրեւ  
իրապէս իշխած վերոյիշեալ շրջանին, ամբողջա-  
կան Վրաստանի վրայ, եւ մեր այսպէս վարուե-  
լուն կոռւան ունեցանք օտար վաւերական աղբե-  
րաց ու մանաւանդ արձանագրութեանց վկայու-  
թիւնները: Այսպէս, երկու Ճիւղերէն ալ մեր-  
ժած եղանք Բարտոս, Քարթամ, Կայոս,  
Ազերկ, Ազմայէր (Արմազէլ), Դեղուկ, Աղմի  
անունները: Արդ, Վրաց ժամանակագրութեան  
ցուցմունքը երկճիւղութեան մասին՝ կը թուի  
արդիւնքն ըլլալ երկու ազդակներու: . . աւելի  
հին հարստութեան մը վերաբերեալ աւանդու-  
թիւններուն փոխադրման դէպի քրիստոնէական  
Ա. եւ Բ. դարերը, եւ կամ գուցէ թր Զամշեանի  
ըրածին պէս խմբագրական ջանքի մը՝ երկու բո-  
լորովին տարբեր աղբիւներու մէջ տրուած տե-  
ղեկութիւնները համաձայնեցնելու, որով փո-  
խանակ մէկը կամ միւսը մերժելու՝ երկու շար-  
քերն ալ քով քովի կը դրուին իբրեւ զուգա-  
հեռական գիծեր. Բ. սա պարագային թէ դոնէ  
ի սկզբան, Ագրիկի երկու որդուոց ներքեւ, իրա-  
պէս կրկին ճիւղով թագաւորութիւն եղած է:  
Բայց թէ որչափ ատեն շարունակեց այդ երկ-  
ճիւղութիւնը՝ այն չենք գիտեր: Յամենայն դէպս,  
Քարթամի ցեղը (որ մեղի համար աւելի հե-  
տաքրքրական է), շարունակած կ'երեւի Վրաց  
գահին վրայ որդւոց յորդի դեռ երեք, թերեւս  
չորս սերունդ ալ: Ուստի ժամանակագրութեան  
ընծայած տարերութիւններն ընդունելով, առ ի  
չգոյէլաւագունի, կը գտնենք թէ Քարթամի որդին  
կայոս իշխած է՝ ս. ք. 188—173, Ազմայէր  
կամ Արմազէլ՝ 173—157, դերուկ՝ 157—147:  
Այսպէս Ազմայէր (Արմազէլ) ժամանա-  
կակից կ'ըլլայ Արտաքսիասի վերջին օրերուն,  
Ասկից կը հետեւի թէ Արտաշէսի որդին Զա-  
րեհը գերի բռնողն էր Ազմայէր (Արմազէլ):  
Ինչպէս Վրաց աւանդութիւնը կուտայ, եւ ոչ թէ  
Խարձամ (այսինքն Քարթամ): ինչպէս Խորե-  
նացւոյ քով ունիք: Աերջնիս քով եղած ա-  
նուանափոխութիւնն արդիւնքն ըլլալ կը թուի  
Քարթամի դերին շփոթուելուն Փարսմանի դերին  
հետ, որով սկզբնական աւանդութեան մէջ կա-  
րեւոր դիրք բռնող այդ անունն անպաշտօն մնա-  
լով՝ անցուած է աւելի աննշան Ազմայէր ա-  
նուան տեղ:

ժամանակակից Փարսմանի մը որդին, Աղմի,  
Յ տարի, եւ հուսկ ուրեմն Փարսմանի կինը  
Ղալանա, 14 տարի իշխանութեամբ։ Մենք  
վերեւ այս Միհրդատն ու Փարսմանը աւելի հա-  
ւանականութեամբ քրիստոնէական Բ. դարուն  
սկզբներն իշխած ընդունեցանք, սակայն Ադմին  
ու Ղատանա թագուհին մերժեցինք։ Թերեւս  
այս երկուքն ալ պատկանին Քարթամեան ցեղին  
եւ իշխած ըլլան Ն. Գ. երկրորդ դարուն։ Այս-  
պէս թէ այնպէս, կը թուի թէ Դերուկէն ետքը  
գեռ 30 տարի ալ, եթէ ոչ աւելի, շարունա-  
կած է Քարթամեան գերդաստանը եւ իշխած  
մինչեւ զբեթէ այդ դարուն վախճանը։

ԵՐԻԱ Ս. ՔԱՍՈՒԻՆԻ

(፲፻፲፭-፲፻፲፯)



## ՆՈՐ ԶՈՒՂԱԾԻ ԼՐԱԲԵՐԵ

(Պատմական ակադի 15 ամեակի առթիւ:)

90 ական թուականների սկզբու մ ջու-  
ղահայ գրական, կուլտուրական կեանքն  
սկսում է կենդանութեան նշաններ ցոյց  
տալ: 1904 Յունուար 1 ին ջուղահայ հո-  
րիզոնի վրայ բացւում է մատառը վերա-  
ծնութեան եւ հայ լրագրութեան պատմու-  
թեան համար մի նոր ալշալցս, որովհե-  
տեւ այդ ժամանակ է ծնունդ առնում մի  
նշանաւոր ձեռնարկութիւն, որը ջուղայի  
ժամանակակից թանձր խաւարի մէջ փայ-  
լում է որպէս մի լուսատու աստղ: Այդ  
օրը, սրանից ուղիղ 15 տարի առաջ՝ Հ.  
Բագրատ վարդապէ. Վարդապարեանը հիմ-  
նում է Նոր Ջուղայի լրագրեր ամսաթերթը,  
որ տպւում է Ս. Ամենափրկչեան վան-  
քում, որով եւ սկիզբ է առնում մի նոր  
շրջան: Այդ լրագրերը նշանաւոր է, իբրեւ  
առաջին լրագիրը ջուղահայերի մէջ:

Հրաբերի զիստագը նպատակն է հրա-  
տարակել Պարսկաստանի հոգեւոր իշխա-  
նութեան կարգադրութիւնները այլեւ տպ-  
գային, եկեղեցական-կրօնական, կրթական,  
բարեգործական հաստատութիւնների մա-

ամն՝ նրանց տեղեկագիրն ու հաշխաները եւ ընդհանրապէս նոր ձուղայի հայ ժողովրդի ու մասնաւորապէս շրջանիս զիւղերի զրութեան մասին եւ ուրիշ յարմար յօդուածներ ժողովրդական ընթերցանութեան համար։ Այս Լքաբերի գլխաւոր նպատակը։

Երբ Բաղրատ վարդ. Վարդազարեանն սկսեց Հրատարակել Նոր-ճուղայի Լքաբերը, նա օժտուած էր խմբագիր-Հրատարակչի շահնդով։ Այդ վեհ կոչման արժանաւորապէս ծառայելու համար նա ունէր նախապատրաստութիւն, բազմակողմանի զիտութիւն, ծանօթ էր Փրանսերէն եւ Շուստերէն լեզուներին։ Այս մտաւոր հարուստ պաշարի հետ, նա միացրել էր նաեւ երկաթէ կամք, աննկու ոգի եւ հաստատամտութիւն։ Այդ ամէնն ունէր Բաղրատ վարդապետ։ Դա այն հազուազիւտ հոգեւորականներից է, որ կարծես կոչուած է ծառայելու հայ ժողովրդին։ Նա մի միաթարական բացառութիւն է հայկական տիսուր իրականութեան մէջ։ Այս այդպիսի յատկութիւններով օժտուած Հրատարակչի խմբագրութեամբ է, որ ասպարէղ է գալիս Լքաբերը։

Լքաբերը բաւական ճոխ է բովանդակութեան կողմից։ Բաղկացած է 4—6 մեծադիր էջերից։ Սկզբում Հրատարակում է ամիսը մի անգամ, իսկ 1905 Ապրիլ ամիսից յետոյ դառնում է երկամսեայ։ Հրատարակուելով Լքաբերը դառնում է ճուղահայ ժողովրդի զգացմունքների միակ արտայայտիչը։ Նրա դրօշի շուրջ համախմբւում են անմիջապէս ժամանակի նորադյն իդէալներով սնած եւ առաջադէմ գաղափարներով համակուած ինտելիգէնտ ոյժերը, որոնք հրապարակի վրայ դնում են մի շարք հասարակական, ընտանեկան, գրական, կրթական եւ այլ իննդիրներ։ Այստեղ դուք կը տեսնէք նաեւ ճուղահայ կինը, որ դուրս գալով ընտանեկան նեղ շրջանից եւ արհամարհելով ամէն տեսակ

նախապաշարում՝ մասնակցում է ժամանակի կուլտուրական հոսանքին։

Լքաբերի ամենափայլուն բաժինը կազմում են խմբագրականները։ Լուրջ, մտածած, կենդանի եւ անկեղծ զգացմունքով տղորուած առաջնորդներ են դրանք, որ հմայում, ոգեւորում են եւ կարդացողն առանձին հաճոյքով է թերթում այդ էջերը։ Գրեթէ՝ ոչ մի գրուածք, ոչ մի կտոր այնքան խոր ազդեցութիւն չի թողնում ընթերցողի վրայ, որքան այդ վարդապետի վառվուուն, անկեղծ ոգով սոգորուած յօդուածները։ Բաց արէք օրգանը, շրջեցէք թերթիկները եւ ահա նրանք շարան-շարան կը պատկերացնեն ձեր առաջ՝ «նոր տարւայ առթիւ», «մեր գաղութների վիճակը», «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», «Զսկոփւենք անցեալով», «Հայոց տառերի գիւտի 1500 ամեակի առթիւ», «Խօլերան տարածւում է, պատրաստ եւ զգուշ պիտի լինել», «Դժբախտ է զիւղացին», «Բարոյական հրէշներ շատ ունիք», «Յուսահատ մի՛ թողնէք թշւառներին, եւ այն։»

Այդ բովը մէջ կը նշմարէք դուք տաղանդաւոր վարդապետի ամբողջ աշխարհացեացքը, նրա առաջադէմ գաղափարներն ու ողին։ Նա հետեւում է ժամանակակից կեանքի երեւոյթներին, մերկացնում մեր բարոյական ախտերը եւ կոչ է անում դպի աշխատանք, դպի ինքնածնաչութիւն եւ ինքնաքննութիւն։

Այսուհետեւ Լքաբերում առաջնակարգ տեղ է բռնում բանասիրական բաժինը եւ կամ ֆելիետոնը։ Այդ տեղ դուք կը գտնէք պատմական լուրջ ու սումասիրութիւններ՝ «Ե. դարու նշանակութիւնը մեր պատմութեան մէջ» — Ա. Ղազարեանի. «Մեր 19րդ դարու գրականութեան մասին» — Ռ. Քաջբերունու. «Տպաւորութիւններ» — Ռւսանողի. «Արձագանքներ» — Հրանտ Փալեանի. «Գծեր» — Ա. Բէնի. «Աշակերտի յիշատակարա-

Նից,, — Հով . Սարի . «Կրթական գործը  
Սալմաստում,, — Երեւանդ Փրանգեանի .  
«Գիւղական ցաւերից,, — Իրանցու : Կան  
նաեւ արտատպ „ մներ՝ «Հայդուկի նոր տա-  
րին,, եւ «Ալիւնոտ թիւմոր,, — Աւետիս  
Ահարոնեանի . «Զրոյցներ,, — Վրթանէս  
Փափազեանի :

Հրաբեր՝ զլիսաւոր և աժիններից մէկն  
է նաեւ զիւղական աշխարհ : Հայ զիւղա-  
ցու տունն ու տեղը, վարք ու բարքը, նա-  
խապաշարումները, սովորութիւնները, ու-  
րախութիւններն ու վշտերը, խոշտանգում-  
ներն ու սարսափներն՝ իր հարստահարիչ,  
կեղեքող վանդալներով — բոլորը լուսա-  
նկարչական ծշտութեամբ անդրադառնում-  
են թերթում: Թիրթը լիքն է նաեւ ջուղա-  
հայ կեանքի բազմազան տեսարաններով:  
Ջուղայեցու տուն ու տեղը, նրա կեանքի զա-  
նազան ելեւ էջներն իր դրական ու բացասա-  
կան կողմերով, թերթում հանդէս են գալիս:

Աչքի է ընկնում նաև քու կան բաժինը, որի մեջ անդրադառնում է ժամանակակից ծուղահայ հասարական կեանքի մի տիսուր էջը: Քննադատութիւնը այդտեղ լուրջ կերպով առաջ տանողներից մէն է Պր. Տիգրան Արքարեանը, որ խիստ կերպով բողոքում է ծուղահայ մասնուկապատանիների զեսի Հնդկաստան գաղթի մասին, որոնք մանկութիւնից բաժանելով ընտանեկան օջախից, այլասեռում, կորչում են: Հետեւ մեծ տեղ է զբաւում

թարգմանական դրուածք՝  
բացի բազմաթիւ ինքնուրոյն, քննա-  
դատական, թարգմանական դրուածքներից,

այստեղ կարելի է գտնել հարուստ տեղե-  
կութիւններ՝ վերաբերեալ Սինդափուրի,  
Ռանգունի, Պինանգի, Կալկաթայի, Բու-  
բայի, Ֆաւայի եւ այլ հայերի կեանքից եւ  
նրանց բարեգործական-կուլտուրական հաս-  
" ատութիւնների մասին:

Այսուհետեւ պատկառելի տեղ է  
բոնում արտաքին եւ ներքին լուրերը:  
Ազգային կեանք/ց լուրեր: Արատպում  
ներ “Մշակից,, “Մուրճից,, Կայ նաեւ  
յայտարարութիւնների եւ նուերների բա-  
ժին:

Այսպէս ջուղահայ գրականութեան  
պատմութեան մէջ, Նոր-Ջուղայի լրաբերի  
նշանակութիւնը մեծ է: Նա բարերար ազգե-  
ցութիւն է անում ջուղահայերի գրական  
ճաշակը զարգացնելու եւ մտքերն աւելի  
բարձր զաղափարների նախապատրաստելու  
գործում: Նրա քարոզած գաղափարների  
շնորհիւ ժողովուր/ը զարթնում է իր գա-  
լու միա եւ ձգտում դէպի լցու:

Ասպարէղ գոլով Լքաբերը, հրապա-  
րակ է հանում մի շարք կենական նշա-  
նակութիւն ունեցող ինդիրն՝ ր, որնք  
մնացիւ էին անուշադիր եւ որի մէջ  
խեղդւում էր ժողովուրզը, Հարկաւոր էր  
մի հզօր ի թան, մի գործօն ոյժ, որ մեր-  
կացնէր, պարզէր այդ երեւյթները եւ  
ուղղութիւն տար հասարակական կեանքին,  
նրա զգայումներին, իսկ ով պիտի կատա-  
էր այդ հսկայական գերը, ով պիւ ի կեն-  
չանացներ ժողովուրզն իր ան շարժու-  
թիւնից, ով պիւ ի ցցց տար նրա պակա-  
սութիւնները։ Ահա այդ բոլոր տիսուր  
երեւյթների առաջ կանգնած Լքաբերը,  
յարատեւ պայքար է մղում ժամանակի  
խաւար ոգուն եւ անշարժութեան դէմ  
քարոզելվ զէպի ինքնաճնանաչութիւնն  
դէպի նոր դաւանանք եւ նոր հոդիզոններ  
եւ նա շրջում է մարդկանց մէջ, հըն-  
չեցնում լուսաւորութեան զղանջը, զար-  
կում քնած սրտերին, զարթեցնում նրանց,  
առաջն զգելով զէպի լոյս . . . Այսպէս ահա

լրաբերն իր ամենամաքուր իդէալներով  
դառնում է վերանորոգիչ, յեղափոխիչ  
ջուղահայ կեանքի մտաւոր, բարոյական  
վերածնութեանը: Նրանով ժողովրդի մտա-  
ւոր հորիշնն ընդարձակւում է եւ հարս-  
անում: Խսկապէս ջուղահայ ժողո-  
վուրդն իր կուլտուրական յատկութիւն-  
ներով շատ բան պարտական է Սոր-ջու-  
ղայի Լրաբերին: Եթէ երբեք նա հասել է  
որոշ ազգային ինքնագիտակցութեան եւ  
այսօր ձգտում է ազգային դաստիարակու-  
թեան՝ նա մեծ մասամբ պարտական է այդ  
Լրաբերին: Թէեւ ամսագիրն ամբողջ 4 տար-  
ւայ կեանք է ունենում, 1908 թուին ինչ  
ինչ հանգամանքների պատճառով դադա-  
ռում՝ սակայն նա կարմիր թելի նման ան-  
մոռանալի մի հետք է թողել իր ետեւից  
եւ այսօր պատուաւոր տեղ է գրաւում  
ջուղահայ տարեգրութեան եւ հայ լրա-  
բերական պատմութեան մէջ:

Նոր-Զորում:

ԱՐԱՄ ԽՈԲԻՆԻ



## ՊԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐԵՔՆԱԿԱՆ ՆՈՐ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(C<sub>m</sub>, p<sub>m</sub> = 2, m = 1, 2, ..., n)

այսուհետեւ

197. “Եղքա եւ զտենչալի բժշկութեան արմատոց աւգտակարութեան բերեալ զդուռալու՝ զդեռովովն լուսանենց, Ադաթ., էջ 4. առ չունին “զդուռալով”, իսկ Ե, որ է ըսել վենետիկեան տպա, գրութիւնը, չունի “զդեռովովն ոյ, հրատարակիչն է որ կ'ուղիէ եւ կ'ընթեռու յառաջընթրութիւնն միացընելով երկու ընթերցուածները, այս որբադրական փորձով սակայն բոլորովին կը խանդարուի հատուածիս դասական շարադասութիւնը՝ նման իւրով փառաւորեաց համեմերութեամբն ոյ, էջ 46 եւ այլն ձեւերու, որոնց մասին ընդարձակօրէն խօսեցայ վերը՝ թիւ 282 “ուսունի՞մ ոյ բային տակ. ուստի շարադրութեան նախկին դասական կերպա-

անհըս անեղծ պահելու համար, պէտք է անհրաժեշտութէն ջնջել “զպոռալսղ” բառը, որ ծնունդ առած է առընթերակաց “զպոռալս” բառին նմանագրութենէն, եւ “զպէնլսլս” ըմբոնել իբրեւ գոյական՝ “զպէնլսլս”։ Ադաթ անգեղեայ կարծես յատուկ նման ասութիւններու համար տեսմիայն “յապականութիւն դարձուցանէր զինանիստ քաղաքացն եւ աւանացն ցանկալեացն, էջ 16, և ոչ չիբածեծ գանին գրեաց ինչ զվիշտսն” (?), էջ 60, “իբրեւ զի շմբռւարեսէլ (Կնիք Հաւատոյ ունի “զմբռւարեսէլ”, տարբերութիւնը, էջ 155) կերպարանացն զոր առն՝ բարձրացուցանէրն, էջ 203, “զփառ հաւըն բարձրացուցանէ, յայտ արարեալ զինանիսն կամացն, էջ 365 եւ այլն։

սողմնալ:

198. «Եւ տես զիարդ զամենայն չարիս թողեալ եւ զայն եւեթ դնէ՝ որ գեռ առժամայն առլեռը մտեալ արծարծէր», Ոսկեք. Մեկն. Մաթ. Բ, էջ 557, ՀՔ իբրև ուղիղ ձեւ մը յառաջ կը բերէ հատուածը եւ խնդրական բառը կը մեկնէ «սողիլ, սողոսկիլ, սպրդիլ, յն. մի բայ նփօրմէա, իբր յարամբի ի ներքս մտանել կամ դարանիլ, ոմկ. տակէն բանիլ», (Բ, էջ 727), նոյնպէս ունին նաեւ Զախջախեան «սողմէս = սողոսկիմ, սպրդիմ» եւ Զալըխեան «կիրմէքո», այս հեղինակութիւններու հանդէպ ես կը կարծեմ թէ՝ քանի որ «սողմ» կամ «սողոսմ» արմատ մը դոյութիւն չունի «սող» նշանակութեամբ, անծանօթ այս բայը պէտք է ուղղել եւ սովորական ձեւին համաձայն ընթեռնուել «սողեալ մտեալ»:

սուհակ:

199. “Եւ յԱմովս ասացին մի մարդարէա-  
նար դու յանուն Տեառն եւ մի ուսուցաներ զտունսդ  
սդահական քառաւն, էջ 388, այս հատուածը զոր  
Antoenslli բառական կը թարգմանէ տօմս  
istam rebellium, էջ 448, պէտք է անպայման  
որբագրել ասորի բնագրի վրայէն եւ ընթեռնուլ  
“եւ մի ուսուցաներ զտունսդ Սոհակայո, այս տես  
ղեքը Եօթանասնից թարգմանութիւնը կը կարդայ  
ս մի մարդարէանար ի վերայ Խօրայէլի եւ մի ժողովս  
ժողովեր ի վերայ տանն Յակովուո”, Ամովս, ի,  
16 = մի որօքիցես էπὶ τὸν Ἰσραὴλ, καὶ οὐ  
μὴ δχλացωγήσῃς ἐπὶ τὸν οἰκον Ἰαχώβ:

### ԱՐԱՀԱՆՑ :

200. “Քանզի եւ չարագործք մինչ ի բանտին լցեն աներկիւզ կեան, եւ յօրժամ յատեանս առաջի օրական դացն տանիցին՝ ապա կարի աշաբեկ